Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ ԵՎ ՓՈՔՐԻԿ ՕԼԳԱՆ



891.99Մ
Հ-42

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ — ԵՐԵՎԱՆ

1949

891.99Ա.
Հ-42
30 MAY 2011

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ
# ԵՎ
# ՓՈՔՐԻԿ ՕԼԳԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԿ-ԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ • 1940

10 JUN 2013

10518

Շապիկը և փորագրությունները
փայտի վրա Ռ. Բեդրոսյանի

1257
41

МИКАЕЛ АРУТЮНЯН
ДЕД ЛЕНИН и МАЛЕНЬКАЯ
ОЛЬГА
Армгиз, Ереван, 1940





Փողոց ելավ փոքրիկ Օլգան,
Ցուրտ էր սաստիկ՝
բուք ու ձյուն,
Գնում էր նա, որ իմանա՝
Հայրիկը ե՞րբ կգա տուն։

Նա շատերին արեց հարցում,
Իզուր. չկար պատասխան։
Պետրոգրադի ցուրտ փողոցում
Դողդողում էր երեխան։

Սակայն, ահա, մի տուն ծանոթ՝
Դրոշներով կարմրագույն.
Կծկվեց Օլգան սանդուխքի մոտ,
Աչքին իջավ անուշ քուն։

Այդ ժամանակ սանդուղքից հին
Մի մարդ արագ իջավ վար,
Տեսավ քնած երեխային
Եվ մոտեցավ հայրաբար։

Գրկեց մանկան ու համբուրեց,
Սիրով սեղմեց իր կրծքին.
Օլգան նրա գրկում զարթնեց՝
Տեսավ ԼԵՆԻՆ պապիկին։

Մեծ պապիկին նա ճանաչեց
Իրենց տան մի նկարից,
Որ մի գիշեր հայրը բերեց
Եվ հեռացավ քաղաքից։

Մայրն ասաց.—Օլգա, մոտ եկ,
Տես Լենինին՝ մեր մեծ հոր,
Աշխատում է գիշեր-ցերեկ,
Որ մենք ապրենք բախտավոր։





609

— Լենի՞ն, Լենի՞ն,—ճչաց Օլգան,
Սիրտը զարկեց կրծքի տակ.
Արցունքները կաթ-կաթ ընկան
Աչիկներից կապուտակ։

— Որտե՞ղ է քո հայրն աշխատում,
Հարցրեց պապին սիրալի.
— Կռվում է նա Կրոնշտադտում,
Նավաստի է քաջարի։

Ժպտաց սիրով Լենին պապին,
Ասաց՝—շուտով կըհաղթենք՝
Մանուկներին ու բոլորին
Ազատություն կըբերենք։

Տուն կըդառնա հայրդ շուտով,
Ուրախ՝ փառքով հերոսի.
Էլ չեն լինի զրկանք ու սով,
Թաթիկներդ չեն մրսի։



Գրել, կարդալ կըսովորես
Դպրոցներում լուսավոր.
Եվ սիրունիկ ծիտիկի պես
Կըծլվլաս ամեն օր...

Տարիներ են եկել, անցել,
Լենինգրադ քաղաքում.
Օդաչու է Օլգան դարձել,
Սավառնում է երկնքում։

Եվ հիշում է հաճախ հիմա,
Հպարտ պատմում ամենքին,
Թե ինչպես, երբ մանուկ էր նա՝
Տեսավ Լենին պապիկին։



Պատ. խմբագիր
Մ. Խերանյան
Նկարիչ-խմբագիր՝
Ա. Խուդավերդյան
Տեխ. խմբագիր՝
Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝
Մ. Երզնկյան

*ՎՖ 2617 Հրատ. 5340.*
*Պատվեր 661. Տիրաժ 3200.*
*Հանձնված է արտադրության 23/IX 40 թ.*
*Ստորագրված է տպագրության 30/IX 40 թ.*

*Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65*

ՀՀ Ազգային գրադարան
NL0399821

10518

Գինը 70 կ.

